ՆԱԽԱԳԻԾ 33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N_____- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N1435-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի N1008-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը գումար հատկացնելու մասին>> N1435-Ն որոշման 2-րդ կետի՝

1) <<2010 թվականի ինն ամսում>> բառերը փոխարինել <<2010 թվականին բառերով>>.

2) <<Արտագերատեսչական պահպանության ծախսեր>> բառերը փոխարինել <<Արտագերատեսչական ծախսեր>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N1435-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը.

Մինչև Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում առկա թունաքիմիկատների ոչնչացման կամ սողանքային մարմնի վրայից տեղափոխման հարցերի լուծումը, թունաքիմիկատների արտաբերումը, գերեզմանոցի հողաշերտի և այլ կառուցվածքների վնասումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N1008-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը գումար հատկացնելու մասին>> N1435-Ն որոշմամբ թունաքիմիկատների գերեզմանոցը դասվել է Ճառագայթային, քիմիական և կենսաբանական վտանգավոր օբյեկտների շարքում և պահակային ծառայություն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը գումար է հատկացվել:

1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N1008-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը գումար հատկացնելու մասին>> N1435-Ն որոշման 2-րդ կետում կատարվել են տեխնիկական վրիպումներ՝ շարադրվել է գումարի հատկացման ժամկետը շարադրվել է <<2010 թվականի ինն ամսում>>, իսկ հոդվածի անվանումը՝ <<Արտագերատեսչական պահպանության ծախսեր>>:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Նախագծով առաջարկվում է N1435-Ն որոշման 2-րդ կետի <<2010 թվականի ինն ամսում>> բառերը փոխարինել <<2010 թվականին բառերով>>, իսկ <<Արտագերատեսչական պահպանության ծախսեր>> բառերը փոխարինել <<Արտագերատեսչական ծախսեր>> բառերով:

2. Կարգավորման առարկան.

Սույն նախագծով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N1435-Ն որոշման 2-րդ կետի կիրառումն ապահովելու հարցերը:

3. Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունմամբ կապահովվի մինչև Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցում առկա թունաքիմիկատների ոչնչացման կամ սողանքային մարմնի վրայից տեղափոխման հարցերի լուծումը, թունաքիմիկատների արտաբերումը, գերեզմանոցի հողաշերտի և այլ կառուցվածքների վնասումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից պահակային ծառայություն իրականացումը :

ՆԱԽԱՐԱՐ Ա. ԵՐԻՑՅԱՆ